

ՇԻՐԱՎԻ ՄԱՐԶԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց լեզվի բարբառների նկատմամբ գիտական հետաքրքրությունը հարյուրամյակների պատմություն ունի: Չնայած այն հսկայածավալ աշխատանքին, որ կատարվել է այդ ընթացքում նրանց ուսումնասիրության ուղղությամբ, դեռևս մեծ բանականությամբ բարբառագիտական նյութ կա քննության կարոտ:

Ստորև կփորձենք ներկայացնել Երազգավորս գյուղի խոսվածքի առանձնահատկությունները, որի հետ ընդհանուր շատ բան ունեն շրջակա գյուղերի խոսվածքները, և որը, զանվելով Գյումրուն այնքան մոտ, զգալիորեն տարբերվում է մարզկենտրոնի խոսվածքից:

Գյուղը գտնվում է Գյումրուց 10 կմ հեռավորության վրա և ի քիվս մարզի բազմաթիվ այլ գյուղերի խոսվածքի՝ նրա խոսվածքը ևս մեխանիկորեն ներգրավվել է *կը* ճյուղի Կարնո բարբառի շրջանակներում, որով խոսում է Գյումրին: Այսպես, Ա. Գրիգորյանը գրում է. «Կարինի բարբառը հայոց լեզվի խոշոր բարբառներից մեկն է: Այդ բարբառը կրողները տարածված են քե՝ մեր Միության տարբեր շրջաններում և քե նրա սահմաններից դուրս: Բարբառի հիմնական կենտրոնը, սակայն, Լեռնականն է՝ իր մոտիկ շրջաններով (Աղին, Արբիկ, Ախուրյան, Դուկասյան)»:¹ Այնինչ, իրականում Շիրակի մարզի միայն սակավաթիվ գյուղական բնակավայրերում են խոսում *կը* ճյուղի բարբառով (Ոսկեհասկ, Հայկավան): Եվ, անշուշտ, իրավացի է Մ. Աբեղյանը, երբ նկատում է. «Շատ անգամ նույնիսկ հարևան տեղերի ու գյուղերի խոսվածքները տարբերվում են իրարուց քե՝ բառերի հնչյուններով ու նշանակությամբ և քե՝ ձևերով: Դրսից քե-քե դիտողի համար այդպիսի խոսվածքները նույն բարբառն են կազմում, բայց իրենք տեղացիները շատ լավ են զանազանում իրենց լեզուները, և մասնագիտական ուսումնասիրությունը պարզում է դրանց տարբերությունները»:²

Պատմական Երազգավորսը (Շիրակական) VII դարից հիշատակվում է որպես գյուղ, իսկ արդեն IX դարի կեսերից՝ գյուղաքաղաք: IX դարի վերջերին դարձել է Բագրատունիների թագավորանիստ և արքունի կայվածք: Այստեղ է Մմբատ Ա Բագրատունին (890-914թթ.) կառուցել Սբ. Փրկիչ նկեղեցին և օծվել նրանում: Ավելի ուշ կառուցվել է Սբ. Ասավածածանի եկեղեցին: Սկյուկ-թուրքերի 1064թ. արշավանքի ժամանակ Անիի հետ ավերվել է նաև Շիրակական-Երազգավորսը: Թուրքական անիռալեստության շրջանում այն վերածվել է գյուղի և կոչվել Բաշ-Շորագյալ, որը XIX դարի վերջերին ունեցել է 208 տուն (1601 հայ բնակիչ): Գյուղում գործել է Սահակյան վարժարանը, որը բացվել է 1877թ.: 1920թ. հայ – թուրքական պատերազմի ժամանակ բնակչությունը տեղահանվել է և հաստատվել Արևելյան Հայաստանում, հենց Բաշ – Շորագյալից մի քանի կիլոմետր հեռու գտնվող թուրքական Արաղլս գյուղում, որի թուրք բնակչությունն էլ տեղափոխվել է մինչև օրս էլ ապրում է Բաշ – Շորագյալում: Այժմ այս երկու բնակավայրերը գտնվում են Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի տարբեր կողմերում, Ախուրյան գետի հակադիր ափերին, Ախուրյանի ջրամբարի մոտ: Արաղլսը 1945թ. անվանվել է Երազգավորս: Բացի Բաշ – Շորագյալի բնակիչներից, որոնց կոչել են եւրական (տեղացի) կամ շորագյուլցի (106 տուն), գյուղում բնակություն են հաստատել նաև Արսունք գյուղից 110 տուն մշեցի գաղթականներ: Գյուղի տարեցները վկայում են, որ տեղացիների բարբառի վրա դա ոչ մի ազդեցություն չի բոլել: Այնինչ ժամանակի ընթացքում կատարվել է հակառակը. մշեցիների անմիջական ժառանգներն իրենք են սկսել խոսել տեղական բարբառով, իսկ Մշո բարբառը մնացել է սոսկ որպես հիշողություն անցած – զնացածի ու նախնիների մասին: Օրինակ՝ տարեց մի կին՝ Մ. Սահակյանը, Մշո Արտոնք գյուղից գաղթած իր ծնողների մասին պատմելիս օգտագործում էր տեղացիների խոսվածքը և Մշո բարբառին էր անցնում միայն մոր խոսքերը հիշելիս, ինչպես՝ «Մերոս պաղճքմ էր, քե ինչոյս էին ե՛րբանք արախչի գործ քմ: Ըսքմ էր, քե ...

¹ Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 333:

² Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 47:

Լատ, մքր երգիր ցաւներ գոլխարկ չոն դըրէ. արախչի կը դրնէին ուրանց գրուխ. *Ես էլ հարցընմ էի, թե արախչին ի՞նչ է, մա*: Կոթվից կը գործէին, հագար տեսակ նախշ կենէին ուր վըրեն նըխշուն թելերով: Ըս արախչին կը դրնէին ուրանց գրուխ, ֆաս լը կը փաթըլին ուրանց ճակտին»:

Այսօր գյուղի տարեցների հիշողություններում դեռևս պահպանվում է ծնողների բարբառը, բայց երիտասարդներն արդեն չգիտեն և չեն խոսում Մշո բարբառով:

Տեղական խոսվածքի հնչյունական համակարգը լրիվ համապատասխանում է Կարնո բարբառի (հատկապես Գյումրու խոսվածքի) հնչյունական համակարգին, ուրում կա քառաստիճան բաղաձայնական համակարգ: Բացի պարզ և շնչեղ խոլերից ու ձայնեղներից՝ կան նաև շնչեղ ձայնեղներ (*շ, գ, ղ, ձ, ջ*) և ձայնեղ *հ (հ)*:

Գրական լեզվից տարբերությունները դրսևորվում են առաջին հերթին հնչյունափոխության մեջ: Օրինակ՝ *ա* - ն փոխվում է *ռ* - ի (րսել, հիվըղնալ, հասկընալ), *է* - ի (էնել), *ռ* - ի (թոռմել): *Ե* - ն փոխվում է *ս* - ի (ախսեր), *է* - ի (լընել), *հ* - ի (հիրգուն, հիրեր), *բ* - ի (ըրունգ), *է* - ն փոխվում է *բ* - ի (մըխ), *խ* - ի (լիգու): Ի - ն կարող է փոխվել *բ* - ի (ընծի): *Ռ* - ն բառակցքում արտասանվում է և *վո* (լառասկզբում՝ փոռ, վորփ), և *օ* (ուլլըել, ռխչար), և *ա* (արոն), երբեմն էլ բառամիջում դառնում է *ու* / ծում ու պաս):

Երկհնչյունները որպես կանոն չեն պահպանվում, պարզվում են, ինչպես *այ-է* (հեր, մեր), *ույ-ու* (լուս), *յու-ու* (ծուս, ալուր): Զայնավորասկիզբ բառերից առաջ արտասանվում է *հ*, ինչպես *հանձրև, հարև, հանգաջ, հանգըջող* և այլն: Խուլ բաղաձայնների արտասանությունը բառամիջում ձայնեղացած է, ինչպես՝ *մյնել, կերազուր, վող, փեղ, պարա, պաղ, ուղել, հրնգնել* և այլն:

Շնչեղ խոլերը սովորաբար բառակցքում են շնչեղ արտասանվում, իսկ բառամիջում և բառավերջում վերածվում են պարզ խոլերի: Օրինակ՝ *աթու - առու, չափել - չապել, թաթ - թաա, մութ - մուա*: Զայնեղների խլացումը ավելի թույլ է դրսևորվում սովորաբար ձայնորդներից հետո: Օրինակ՝ *կարգին-կարկին, կարգալլըել - կարկալլըել, ջարդել-ջարաել*: Բառերում նկատելի են և՛ առնմանության, և՛ տարնմանության, և զրափոխության բազմազան երևույթներ. *շարժել - ժաժ տալ, թոնիր - քոնիր, դիոլ - լլա-վոլ-դաբուլ, դատարկ - դարդակ, շարձ - ֆարշ, նախշած - նշխած, ականջ - հանգանջ, կճնայ - կրեճ* և այլն:

Գյուղացիների բառապաշարում շատ են փոխառությունները, գերազանցապես բուրբերենից և ռուսերենից: Օրինակ՝ *յորդան (վերմակ), դոշակ (ներքնակ), փեշքիր (սրբիչ), ջիզյար (յարդ, նաև հոգի), յալանչի (ծաղրածու), քյանդը (սպարան), քյանդը-բազ (յարախաղաց), չասկ (խազանակ), ստոլ (աթոռ), ուլից (փողոց), ցենտը (կենտրոն), դիվանի (բազմոց), զանախակա (վարագույր), գուպկա (սպունգ), աղեվիզոր (հեռուստացույց), բոչկա (տակառ)* և շատ այլ բառեր:

Գոյականների հոգնակին կազմվում է *եր, ներ, էր, ան, դիք, իք, անք, էնք, օնք* մասնիկներով, ընդ որում, շեշտագուրե՛ն ձայնաւորների ավելի հաճախական հնչյունափոխությամբ, օրինակ՝ *տընէր, աշխըաներ, ախպրդիք, ամնիր, քեռանք, Պեղըսէնք, պաքօնք* և այլն:

Կը ճյուղի բարբառի խոսվածքների նման, Երազգավուրսի խոսվածքը ես ներգոյական հոլով չունի, և ներգոյության իուստոն արտահայտում է սեռականով և *մեջ* կապով. որը միշտ օգտագործվում է բ հոլի հետ՝ *գեղի մեջը, անտառի մեջը* և այլն: Հոլովման համակարգում կան նաև *կը* ճյուղի բարբառներին ոչ բնորոշ իրողություններ (հատկապես դերանունների հոլովման ժամանակ): Օրինակ բացառական հոլովը կազմվում է ոչ թե *են* (ինչպես *կը* ճյուղի բարբառներում), այլ *ից* հոլովակերտով (ծուկ, ձրգից): Գրականի նման այստեղ ևս գոյականները ենթարկվում են *ի, ու, ան, ոք, վա, ց, ա, ռ* հոլովումների: Ընդ որում, հնչյունափոխության լայն հնարավորություն ունի նաև շեշտագրկված *ա*-ն, որը համարյա միշտ փոխվում է *բ*-ի, բացառությամբ հատուկ աւնունների և միավանկ բառերի: Օրինակ՝ *սեղան-սեղնի, դ'անագ - դ'անգի, բայց՝ բարձ-բարձի, Արամ - Արամի, Աշտարակ - Աշտարակի* և այլն:

³ Հետաքրքիր է, որ մշեցու դատարը մորը կոչւնում է ոչ թե նանե, այլ՝ մա:

Ածականի բաղդատական աստիճանը քեև սովորաբար *հալիկի* բառով է կազմվում, սակայն երբեմն օգտագործվում է քուրքերեն *ջիկիզ* բառը (ջիկիզ մեծ, ջիկիզ բարձր), զերադրական աստիճանի կազմիչը *համենա* նախածանցն է:

Քանական թվականներն են՝ *մեզ, էրզու, հիրեր, չօրս, հինգ, վեց, յօթը, ութը, ինը, տասը, քսան, եռասուն, քառասուն, հիցուն, վացուն, յոթանասուն, ութանասուն, իննասուն, հարուր* և այլն: Փոխանուն թվականները հոլովվում են հիմնականում այնպես, ինչպես գրական լեզվում, միայն թե շեշտադրված ձայնավորը հաճախ փոխվում է *ը - ի* (*եռսուն - եռսնի*): Դասական թվականներից մի քանիսը ձևափոխված են (*հառաջի, եկորորդ*): Բաշխական թվականները *ւչկան* ամանցով չեն կազմվում, այլ օգտագործվում են *էրզու - էրզու, հիրեր - հիրեր* էլքնավոր ձևերը:

Խոսվածքում օգտագործվող աճճնական դերանուններն են *ես, դու, լնի, եհներ, մենք, դուք, ընդոք, հիրանք*: Ամենագործածական ցուցականներն են՝ *եսի, էդի, ենի, ըսպես, ըմբես, ըդպես, էս, էդ, են, ըսքան, ըդքան, ենքան*: Հարցա-հարաբերական դերանուններն են *հոպ, փորը, ինչ. ինչոք, հուր, հուրդեղ, ինչքան, քանի*, որոշյալ դերանուններն են *համեն, համենքը, սաղը /բոլորը/, համեն մեզը, համեն մէ* և այլն, ժխտական դերանուններն են՝ *հէ մեզը, հէ մէ, հէ բան, հէ մարք*:

Անճնական դերանուններն հոլովվում են այսպես՝

Ուղղ.	ես	դու	մենք	դուք	ենի	ընդոք	հինքը	հիրանք
Սեռ.	իմ	քու	մեր	ձեր	ընդոր	ընդոնց	հիրան	հիրանց
Տր.	ընծի	քեզի	մեզի	ձեզի	ընդոր	ընդոնց	հիրան	հիրանց
Հայց.	ընծի	քեզի	մեզի	ձեզի	ընդոր	ընդոնց	հիրան	հիրանց
Բաց.	ընծնից	քեզնից	մեզնից	ձեզնից	ընդորից	ընդոնցից	հիրանից	հիրանցից
Գործ.	ընծնով	քեզնով	մեզնով	ձեզնով	ընդորով	ընդոնցով	հիրանով	հիրանցով

Ցուցական դերանունները հոլովվում են այսպես.

Ուղղ.	էսի	ըսմք	էդի	ըդմք	ենի	ընդոք	էս	էդ
Սեռ.	քուր	ըսոնց	ըդուր	ըդոնց	ընոր	ընդոնց	քսուր	ըդուր
Տր.	քսուր	ըսոնց	ըդուր	ըդոնց	ընոր	ընդոնց	քսուր	ըդուր
Հայց.	քսուր	ըսոնց	ըդուր	ըդոնց	ընոր	ընդոնց	քսուր	ըդուր
Բաց.	ըսարից	ըսոնցից	ըդորից	ըդոնցից	ընորից	ընդոնցից	ըսարից	ըդարից
Գործ.	ըսարով	ըսոնցով	ըդարով	ըդոնցով	ընդորով	ընդոնցով	ըսարով	ըդարով

Հով հարաբերական դերանվան հոլովման հարացույցն այսպիսին է՝ ուղղ.- հով, սեռ.-հում, տր.-հում, հայց.-հում, բաց.-հումից, գործ.- հումով:

Մնացած հոլովվող դերանունները գայականական *ի* հոլովման են պատկանում *համեն մեզը, համեն մեզի* և այլն:

Անորոշ դերբայը խոսվածքում ունի *ել* և *ալ* վերջավորությունները: *Խոսել* բայն հանդես է գալիս լծորդության փոփոխությամբ՝ *խոսայ*, իրի *զնայ* բայի անորոշ դերբայածն օգտագործվում է *լքտալ*-ը, քեև անցյալ կատարյալն ունի *զնացի. զնացիր* և այլ, հրամայականը՝ *զնա*, վաղակատար դերբայը՝ *զնացել* ձևերը: Ենթակայական դերբայը կազմվում է *ող* մասնիկով, հարակատարը՝ *ածով՝ կայնած, խաղցած*: Համակատար դերբայը համարյա չի գործածվում: Այդ դերբայական իմաստն արտահայտվում է անորոշ դերբայի սեռական հոլովի և *վախտը* բայի օգնությամբ (*խառայու վախտը, վագելու վախտը*) և ոչ թե՝ *խոսելիս կամ վաչելիս*: Անկատար դերբայի կազմիչը *ըմ* մասնիկն է՝ *ըսըմ, էրտըմ, խաղըմ, վագըմ* և այլն: *Դալ, լալ, տալ* բայերի անկատարը խոսվածքում անկանոնություն չունի՝ *գալըմ, լալըմ տալըմ*: Վաղակատար դերբայը կազմվում է *ել, ա-ցել* վերջավորություններով, և երբեմն շեշտադրված *ա* -ն հնչյունափոխվում է *ր*-ի կամ սղվում է (*խաղցել*): Ապակատար դերբայի կազմությունը գրականից չի տարբերվում: Ժխտական դերբայը կազմվում է *ա*, ե վերջավորություններով՝ *զնա, գրե, ըսա, խաղա*:

Մահմանական եղանակի վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերի գրական խոնարհման ժամանակ դերբայական *լ* վերջավորությունը սղվում է՝ *խոսացել են-չեն խոսացե, գրել էր-չէր գրե* և այլն: Անցյալ կատարյալը, ինչպես գրական լեզվում, կազմվում է *եծի, եծիր, եծ, եծինք, եծիր, եծին, ածի, ածիր, ած, ածինք, ածիր, ածին, ա, ար, ալ, անկ, ալ, ան* վերջավորություններով (*ց* և *ք* շնչեղ խոլորը պարզ խոլ են արտասանվում): Միաժամանակ, ի տարբերություն գրական լեզվի, խոսվածքում միայն սոսկածանցավոր բայերը չէ. որ անցյալ կատարյալը կազմում են *ա, ալ, ալ, անք, ար, ան* վերջավորություններով (ոչ թե *խաղացի, ալ խաղցա*): Քանի որ *խոսել* բայը հան-

ղևս է գալիս *խոսալ* ձևով, հետևաբար ունի *ա* լծորդության բայերի անցյալ կատարյալ (*խոսացի*, *խոսացիր* և այլն): *Ըսել* (*ասել*) բայն ունի ոչ թե անկանոն, այլ *ե* լծորդության բայերի կանոնավոր խոնարհում (*ըսելի*, *ըսեցիր*, *ըսեց*), երբեմն նաև՝ *ըսի*, *ըսիր*, *ըսեց*, *ըսինք*, *ըսիր*, *ըսին*: Մահմանական ազդանքին և անցյալի ապառնին խոսվածքում չեն գործածվում և փոխարինվում են հարկադրական եղանակի ձևերով:

Ըղծական եղանակը կազմվում է գրականի նման, երբեմն նզակի կրորդը դեմքում *ի*-ի փոխարենն է վերջավորությամբ (*ըսեմ*, *ըսես*, *ըսե*): Ենթադրական եղանակը կազմվում է գրականի նման՝ *կը* եղանակիչով և ղղծական եղանակի բայածներով՝ *կըսեմ*, *կըսես*, *կըսե* և այլն: Հարկադրական եղանակը՝ *բըղի* եղանակիչով և ղղծականի բայածներով՝ *բըղի* *ըսեմ* և այլն: Հրամայական եղանակը կազմվում է *ե*, *կը*, *ա*, *ացեք* վերջավորություններով՝ *գըե*, *գըեք*, *խաղա*, *խաղացեք* և այլն:

Մակբայների, կապերի, շաղկապների և ձայնարկությունների տարբերությունները գրական լեզվից միայն արտասահման են, երբեմն էլ բարբառային ձևեր են օգտագործվում՝ *թեզ* (շուտ), *քով* (մոտը) և այլն: Դասերի հետ երբեմն *ը* հոդն է օգտագործվում՝ *մեջը*, *հեղը* և այլն:

Ինչպես առհասարակ ժողովրդի լեզուն, Նրազգավորսի խափածքն էլ հյուրեր է պատկերավոր, լի սրամիտ ստանձներով, ասացվածքներով, համեմված յուրահառուկ բառերով ու արտահայտություններով, միմյանց տրվող ամենասարբեր դիպակ ու պատկերավոր մտկանուններով՝ *Գիշունին գների*, *անգեղին ոչ սիրելի*: *Գուգ խոսողի քապեն ծագ է*: *Չուռը նըսահինք*, *դուրը խոսանք*: *Մաղանի յեղի կըրունգն է*: *Չուղտլի մալը ուղողին հալալ է*: *Գեղ Վաղո*, *Կուշ Վաղո*, *Գորտ Մանուկ*, *Քեֆո Մուկուշ*, *Կառաշ Աշիկ*, *Օձ խաղող Մանուկ* և այլն:

Ներկայացնենք մի նմուշ («Հիրեք խրաղ» հեքիաթը) Նրազգավորսի խոսվածքից:

ՄՆ մարտըն էրտըն է աշխաղլու մՆ մարսում մոդը: Գործը ԼՆ է Լյնըն, օր մՆ ամնին տագը կըրագ է վառըն, բայց տերը ըսըն է, օր ամնի բերանը չըբանա: Ըղպես մՆ տարին բրդի աշխատի: ՄՆ տարին համայրա անցըն է, Լս մարտը Լյ չի համպերըն, ըսըն է՝ Լոլլը տեսնին, թե Լդ ինչ է բղօր մեջը: Ամնի բերանը բացըն է, օր մՆ քաղըն քոցած է ջրի մեջը, ջուրն էլ Լպըն է: Տարին օր լորանըն է, տերը գալըն հարցընըն է, թե՛ այ քար ջան, բու բերանը հօլ բացեց: Քարըն թե՛ էս մարտը: Տերը ըսըն է, օր ուրեմն մՆ տարին էլ բրդի ծառայե, բայց Լի ամնի բերանը չըբրդի բանա: Լիի հըլը տարին չի յորածե, էս մարտը Լի չի համպերըն, ամնի բերանը բանըն է, Լի տեսնըն է, օր մՆ քաղըն է Լպըն ջրի մեջը: Տերը Լի գալըն հարցընըն է, հիմանըն է, օր բերանը բացել է, Լդ մարտը տարին Լ է մընըն ծառայության մեջը: Բայց Լս անկամ համպերըն է, ամնի բերանը չի բանըն: Տերն էլ օր հարցընըն ու հիմանըն է, օր ամանի բերանը չի բացե, թողըն է, օր տուն Լրաա: Հիրեք օսկի է աալըն Լդ Լարտուն ու Լրգու բուխանկա հագ, ըսըն է, օր Լդ հիրեք օսկով տուն կրհասնիս. բուխանկի մեզը ճամպին կոտյես. մեզեկն էլ տուն կրտանիս, կրկողրեք, կընգաղ ու Լրեխտոյ հեղ կուղեք:

Էս մարտը յեկըն է, օր էրտա, տերը յեղ է կանընը, ըսըն է՝ մՆ օսկին յեղ տուր, ինչ օր կըտեսնիս, հեչ բան չըհարցընես: Էս մարտը յեկըն է, օր էրտա, տերը Լի յեղ է կանընը, ըսըն է՝ մՆ օսկին էլ տուր ու հուրղեղ օր կեիվ տեսնիս, հանգաքը մեջ չընգնիս: Էս մարտը Լի է յեկընը, օր էրտա, տերը Լի է յեղ կանընը: ՄՆ օսկին էլ է ձեռնից առընը, ըսըն է, թե ինչ օր տեսար, համպերոթյուն կունենաս, չըվրազնաս, դե հրնի գընա:

Էս մարտը Լրաըն է, Լրաըն, հիրգունն օր հընգընըն է, մե տանըն է հասընը, խընտընըն է, օր հիրան բողան ըղեղ մնա է: Գիշերը: Տանաները թողընըն է: Էս մարտը տեսնըն է, օր տան կնիզը շան տեղն է կարած, շունն էլ տեղի վրա է քնած: Հուզըն է, օր հարցըն, հիշըն է ԼՆ մՆ օսկին, օր տերը ձեռնից ստալ ու ըսավ, օր ինչ օր կըտեսնիս, չիարցընես: Ու չի հարցընըն: Օր լուսանըն է, Լս տանտերը ըսըն է, թե՛ այ ախպեր, էս հընչի չես հարցընըն, թե հընչի է շուն կընգաս տեղը պառգած, իսկ կնիզս՝ շան տեղը կարած: Էս մարտն էլ ըսըն է, թե՛ այ ախպեր իմ ինչ գործըն է, դու, բու ընդանիքը: Էս տանտերը ըսըն է, թե՛ բախտըն բերավ, օր չըհարցըլիր, հօլ օր հարցըրկ Լը, սաղի գըլլընընը կըղըն էի: Կնիզս ընձի դավաջանել Լը, հուզըն Լը, օր ճամպա դրոգեր, օր ընձի սըբանեին, բայց շունըս չըթողավ: Էդօր համար էլ ըսպես եմ Լրե:

Էս մարտը հիրա ճամպեն շարունագըն է: Էրտըն է, էրաըն, տեսնըն է, օր էրգու բայֆա կըռվըն են: Հուզըն է, օր բաղիշըն, հիշըն է, օր ԼՆ մՆ օսկին էլ տերը ձեռնից

առավ ու ըսավ, որ կովի չխառնովիս: (Զեղ մեզրմ հուզրմ է, որ բարիշցնե, զարգրմ սը-
րանրմ են: Էրտրմ հասնրմ է տուն: Դուար վագ է էղնրմ: Եղնրմ է երդիկը, նայրմ, տես-
նրմ է, որ կնիզը ու մե ցակ տղամարտլմ հիրար հեղ հանար են էնրմ: Հուզրմ է, որ զար-
գե սրբանե ըդօր: Հանգարծ հիշրմ է, որ էն վերջի օսկին էլ տերը ձեռից առավ ու ըսավ,
որ ինչ որ տեսար, համպերություն կունենաս, չըվրռագնաս: Էս էլ նես է մըդնրմ ու հի-
մանրմ է, որ Լդի հիրա աղեն է: Ուրխրնրմ են, նրստրմ են, որ հաց ուղեն: Էդ մարար ըս-
րմ է, քե աշխաղաձս հիրեք խրաղ էր ու էրգու բուխանկա հաց: Սեզր ճամպին են կերե,
մեզն էլ բերեկ են, որ հիրար հեղ ուղենք: Հացը կըղրմ են, որ մեջը լիկը օսկի է: Ուր-
խրնրմ են, աշխրրով մեզ են էղնրմ:⁴

ОСОБЕННОСТИ ГОВОРА СЕЛА ЕРАЗГАВОРС

___ *Резюме* ___

___ *Л. Геворгян* ___

В общих чертах представлены диалектные особенности звуковой системы, словарного состава, склонения существительных и местоимений, форм прилагательных, числительных и причастий, также спряжения глаголов в говоре села Еразгаворс.

⁴ Պատմեց Ս. Մխիբարյանը՝ 80 տարեկան, Երազգավորսի բնակիչ, պատմության ուսուցիչ: Գրի
առավ Լ. Գևորգյանը 2002 թ.: